Մրցույթ՝ ՀՀ Արագածոտն մարզի « Սաղունցի Ս.Մուրադովի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Արագածոտն մարզի «Սաղունցի Ս.Մուրադովի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

ՀՀ կառավարության 2010թ-ի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)կարգի 2.2,3.4 և 5-րդ կետերի համաձայն՝ Արագածոտնի մարզի << Սաղունցի Ս.Մուրադովի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ- ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2.«Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բաց ակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. դեկտեմբերի 14-ից մինչև 2023թ. հունվարի 4-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 9:00-ից մինչև՝ 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Սաղունցի Ս.Մուրադովի անվան հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հունվարի 19-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արագածոտն մարզի Սաղունցի Ս.Մուրադովի անվան հիմնական դպրոց ՊՈԱԿ-ում
հասցե՝ ՀՀ Արագածոտն մարզ, գյուղ Սաղունց 2 փողոց շենք 9
Տեղեկությունների համար հեռ.՝ 098301932, էլ. փոստ՝ amretaza@schools.am